Շուշանիկ Կուրղինյան

Իմ կյանքն ու խաչը

Աշխարհ եկա
Մութ խրճիթում՝
Ուր որ ագահ
Քաղցն էր վխտում:
Սև գրկանքի
Ցուրտ գրկի մեջ,
Տառապանքի
Խարույկն անշեջ՝

Տգիտության,
Մրուրակալ
Ամուր շղթան
Ուսուց ինձ լալ . . .

Շուրջս խավա՛ր . . . կախված օճորք, ճեղքված թոնիր,
Պապից թողած ավանդական ծեսեր ու պաս,
Եվ բռնության հանդեսները միշտ անխտիր
Ըմբո՛ստ հոգուս, ազատ սրտես միշտ անպակաս:

Սակայն մտքիս
Լայն թևերով,
Հպարտ հոգիս
Սիրած տենչով

Սավառնում էր
Մի այլ աշխարհ՝
Իղձեր ուներ
Վեհ, օգտակար . . .
Գիշեր ցերեկ
Տանջվելով լուռ
Կյանքի բեկ-բեկ
Ցավից մրմուռ . . .
Ազատության
Լույսին ծարավ,
Ստոր շղթան
Չընկճեց բնավ,
Ինձ՝ որ կյանքում
Ջինջ հույսերով
Եվ անլքում
Այնպես սիրով
Ընկա ճամփա
Մենակ, անոք,
Ճակտիս վրա
Անեծք, բողոք . . .

Եվ կեղծիքից, բիրտ գործերից վշտացած,
Իմ թույլ կրծքով մտա կռիվ ուժից վեր՝
Հարվածների գոռ տարափից խոնջացած
Դեռ այնքան վաղ սրտիս իջան կնճիռներ . . .

Եվ մի ծանր
Սև խաչ ուսիս,
Լռիկ, համր
Ցավը՝ սրտիս,
Ես՝ ամենքին
Նվիրվեցի,
Եվ իմ երգին

Լար ընտրեցի
Սեր, միություն
Երգել անմար
Ազատությո՛ւն
Կյանքի համար . . .

1907 թ . 10 ապրիլի